

Հրդեհների վիճակագրություն

2015թ.-ի 9 ամիսների ընթացքում ՀՀ ՏԿ և ԱԻՆ ՊՀ և ՏԱ տեսչությունում հաշվառվել է 2138 հրդեհ՝ 686 361 309 դրամի նյութական վնասով, զոհվել է 23 և վնասվածքներ ստացել՝ 31 մարդ: 2014թ.-ի նույն ժամանակահատվածում հաշվառվել էր 1500 հրդեհ՝ 614 302 976 դրամի նյութական վնասով, զոհվել էին 24 և վնասվածքներ ստացել՝ 47 մարդ: Այսպիսով, հրդեհների քանակն ավելացել է 638 դեպքով (42.53%), իսկ նյութական վնասի գումարը՝ 72 058 333 դրամով (11.73%), զոհերի թիվը նվազել է 1-ով (4.16%), վնասվածք ստացածներինը՝ 16-ով (34.04%):

Հրդեհների քանակը նվազել է միայն Գեղարքունիքի մարզում, իսկ աճել՝ մնացած բոլոր մարզերում և Երևան քաղաքում: Հրդեհների 55.2%-ը տեղի է ունեցել բաց և խոտածածկ տարածքներում, 26.9%-ը՝ բնակելի հատվածում, 5.4%-ը՝ ավտոմեքենաներում, իսկ 12.5%-ը՝ այլ նշանակության օբյեկտներում: Հրդեհների 52.05%-ն արձանագրվել է քաղաքային, իսկ 47.95%-ը՝ գյուղական բնակավայրերում: Հանրապետությունում տեղի ունեցած հրդեհներից 64-ը խոշոր են (նախորդ տարի՝ 42), որոնցից պատճառված նյութական վնասի գումարը կազմել է 502 684 844 դրամ, որն ընդհանուր նյութական վնասի 73.24%-ն է: Առավել խոշոր հրդեհներն են՝

1) 02.01.15թ.՝ Տավուշի մարզ, գ.Աչաջուր, բնակելի տներ: Նյութական վնասի գումարը կազմել է 23 305 200 դրամ: Հրդեհի առաջացման պատճառ է հանդիսացել էլեկտրական հաղորդալարերի կարճ միացումը:

2) 10.08.15թ.՝ Արարատի մարզ, գ.Նորամարգ, խոտի դեզ: Նյութական վնասի գումարը կազմել է 20 միլիոն դրամ: Հրդեհի առաջացման պատճառ է հանդիսացել արևի ճառագայթների ֆոկուսացումը:

3) 20.08.15թ.՝ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ղարիբջանյան խճուղի, „Տրանս ակնթարթ,, ՍՊԸ ավտոբուսների անգար: Նյութական վնասի գումարը կազմել է 19 030 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառ է հանդիսացել էլեկտրական հաղորդալարերի կարճ միացումը:

4) 12.08.15թ.՝ Արագածոտնի մարզ, գ.Ոսկեվազ, խաղողի այգի: Նյութական վնասի գումարը կազմել է 13 700 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը պարզաբանվում է:

5) 04.08.15թ.՝ Սյունիքի մարզ, ք.Սիսիան, հացահատիկի դաշտ: Նյութական վնասի գումարը կազմել է 11 298 500 դրամ: Հրդեհի առաջացման պատճառ է հանդիսացել բաց կրակը:

Զոհերով հրդեհների առաջացման պատճառներն են անզգուշությունը ծխելուց, բաց կրակը, էլեկտրական սարքավորումների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը, ճանապարհատրանսպորտային պատահարը և ինքնահրկիզումը: Զոհերի (որոնցից 6-ը տարեցներ են) գերակշիռ մասը՝ 11-ը, արձանագրվել է բնակելի հատվածում, 9-ը՝ ավտոմեքենաներում: Զոհերն արձանագրվել են հետևյալ տարածաշրջաններում. Լոռի՝ 7, ք.Երևան, Սյունիք և Շիրակ՝ երեքական, Արարատ և Արագածոտն՝ երկուական, Արմավիր, Վայոց ձոր և Գեղարքունիք՝ մեկական:

15 մարդ վնասվածքներ է ստացել բնակելի հատվածում, ևս 8-ը՝ ավտոմեքենաներում, 4-ը՝ ԱԳԼՃԿ-ներում, 2-ը՝ ԲԼԿ-ում,՝ մեկական՝ բաց տարածքում և ավտոտեխսպասարկման կայանում: Վնասվածքները գրանցվել են Լոռիում՝ 7, Սյունիքում՝ 6, ք.Երևանում՝ 5, Արմավիրում՝ 4, Կոտայքում՝ 3, Գեղարքունիքում, Արագածոտնում և Վայոց ձորում՝ երկուական:

Դատաքննչական մարմիններ է ուղարկվել հրդեհի 131 նյութ, որոնցով քրեական գործեր են հարուցվել 35 դեպքում: Տեսչության տարածքային մարմինների կողմից կայացվել են քրեական

գործի հարուցումը մերժելու մասին 669 որոշումներ, որոնց օրինականությունը ստուգվել է համապատասխան տարածաշրջանի դատախազությունների կողմից:

ՊՀ և ՏԱ տեսչության հրդեհների հաշվառման, վերլուծության
և հակահրդեհային քարոզչության բաժնի պետ

Ս.Հայրապետյան